Երկրորդ հաղորդում

Բարի երկրում ապրելու հանգուցային տեսանկյունները
Բաբելոնում գերությունից վերադառնալուց հետո

Գրվածքների ընթերցում. Ա Մնց 4:10, 9:1, 16:8-12, 16-18, 29:10-20, Բ Մնց 20:15-22, 36:22-23

I. Իսրայելի ժողովրդի պատմությունը նորկտակարանյան հավատացյալների, ուստի և եկեղեցու նախատիպն է՝ Բ Մնց 36:22-23, Ա Կրթ 10:6, 11:

II. Հուդան Բաբելոն գերեվարվեց անհավատարմության պատճառով. ուստի գերեվարածները պետք է հավատարիմ լինեին Աստծուն՝ Ա Մնց 9:1, Ա Կրթ 4:1-2, 7:25, Բ Տմթ 2:13, Հյտ 17:14.

Ա. Աստված հավատարիմ է Իր տնտեսությունն իրականացնելու և մեզ Իր տնտեսության մեջ մտցնելու հարցում՝ Ողբ 3:23բ:

Բ. Որպես հավատարիմ Աստված՝ Աստված չի կարող Իրեն ուրանալ, Նա չի կարող ուրանալ Իր իսկ էությունը, այսինքն՝ դրան հակառակ գնալ՝ Բ Տմթ 2:13:

Գ. Երբ Նա՝ հավատարմության Իր հատկանիշով հանդերձ, ներդրվում է մեր մեջ, Նա դառնում է մենք, իսկ մենք դառնում ենք Նա հավատարմության Նրա հատկանիշում՝ Ա Կրթ 7:25, Բ Տմթ 2:13.

1. Ինչպես Աստված չի կարող ուրանալ Իր իսկ էությունը, այնպես էլ մենք, Նրանով կազմված լինելով, չենք կարող ուրանալ մեր էությունը՝ հմմտ Եփս 3:16-17:
2. Հենց այսկերպ մենք կարող ենք հավատարիմ դառնալ և հավատարիմ կդառնանք որպես Աստծու խորհուրդների տնտեսվարներ՝ Ա Կրթ 4:1-2:
3. Քանի որ կազմվում ենք հավատարիմ Աստծով, պետք է հավատարիմ լինենք Նրան. մեր էությունը, մեր կազմությունը մեզ թույլ չեն տալիս հակառակը լինել:

Դ. Հավատարիմ, վստահելի լինել նշանակում է կատարել այն տնտեսվարությունը, որ Տերը մեզ որպես բաժին է հատկացրել՝ խխ. 1-2, 7:25, Ա Տմթ 1:12:

Ե. Երբ Տերը գա Արմագեդոնի մոտ ճակատամարտելու, Նա կլինի տերերի Տերն ու թագավորների Թագավորը, իսկ Նրա հետ եղող հաղթողները կլինեն «կանչվածները, ընտրվածներն ու հավատարիմները»՝ Հյտ 17:14, 19:11-21:

III. Բոլոր նրանք, ովքեր Բաբելոնում գերությունից վերադարձան բարի երկիրը, պատվեր ստացան ճանաչելու, հնազանդվելու և երկրպագելու Եհովային՝ Ա Մնց 16:8-14.

Ա. «Աստված» տիտղոսը ենթադրում է Աստծու զորությունն ու Նրա փոխհարաբերությունը արարածների հետ. «Եհովա» տիտղոսը մատնանշում

է Աստծուն, ով փոխհարաբերության մեջ է մտնում մարդու հետ:

Բ. Եհովա Աստված ոչ միայն Զորավորն է, այլև Նա, ով մոտենում է մարդուն՝ Ծնդ 2:4, 8, 15-16, 18-19, 21-22:

Գ. «Եհովա» անունը նշանակում է «Ես եմ, որ եմ», ինչը ցույց է տալիս, որ Եհովան ինքնագո և մշտագո հավիտենական Անձ է՝ Նա, ով անցյալում էր, ով ներկայում է և ով ապագայում հավիտյանս լինելու է՝ Ելց 3:14, Հյտ 1:4:

Դ. Եհովա Միակն է, ով է՝ Եբր 11:6.

1. Այս եզակի Անձը՝ գոյություն Ունեցողը, մեծ «Լինել»-ն է. «լինել» բայը կարող է միայն Աստծու հանդեպ կիրառվել, այլ ոչ թե մեր հանդեպ:
2. Աստված տիեզերական «Լինել»-ն է, իսկական գոյությունը. միայն Աստված է «Ես Եմ»-ը, միայն Նա ունի գոյությունը:

Ե. «Եհովա»-ն Աստծու անունն է այն բանում, ինչ վերաբերում է գոյությանն ու կատարմանը՝ Ծնդ 17:1, 28:3, 35:11, Ելց 3:14, 6:6-8:

Զ. Քանի որ Եհովան գոյություն ունի հավիտյան, ու քանի որ Նա «լինել» բայի իրականությունն է, Նա կկատարի այն ամենը, ինչ խոսել է՝ Հվի 8:28-29:

Է. Տիրոջ վերականգնման մեջ այսօր մենք կատարման փուլում ենք. մենք փորձառաբար ապրում ենք Աստծուն՝ որպես Եհովայի, մեծ «Ես Եմ»-ի՝ Ելց 3:14-16, Հվի 8:24, 28:

IV. Իսրայելի զավակների վերադարձը բարի երկիր խորհրդապատկերում է քրիստոնյաների վերադարձը եկեղեցու բաժանության հողից միասնության հողին՝ Բ Մնց 36:22-23, հմմտ Երկ Օր 12:1-32.

Ա. Եկեղեցու տեղական հողը հիմնականում Քրիստոսի Մարմնի եզակի միասնությունն է՝ կիրարկված տեղական եկեղեցիներում՝ Եփս 4:4, Ա Կրթ 1:2, 12:27:

Բ. Նոր Կտակարանում, աստվածային հայտնության համաձայն, եկեղեցու հողը կազմված է երեք կարևոր տարրերից.

1. Եկեղեցու հողի կազմության առաջին տարրը Քրիստոսի տիեզերական Մարմնի եզակի միասնությունն է, որը կոչվում է «Հոգու միասնություն» (Եփս 4:3)՝ միասնություն, որի համար Տերն աղոթում էր Հվի 17-րդ գլխում:
2. Եկեղեցու հողի երկրորդ տարրը տեղանքի եզակի հողն է, որտեղ հաստատված է և գոյություն ունի տեղական եկեղեցին՝ Հյտ 1:11, Գրծ 14:23, Տտս 1:5:
3. Եկեղեցու հողի երրորդ տարրը միասնության Հոգու իրականությունն է, այսինքն՝ Հոգու իրականությունը, ով Աստվածային Երրորդության կենդանի իրականությունն է՝ Ա Հվի 5:6, Հվի 16:13:

Գ. Եկեղեցու հողը խորքային կերպով կապված է կյանքի հետ՝ Սղմ 133:1, 3, 36:8-9:

V. Իսրայելի զավակներին, որոնք բարի երկիր վերադարձան, ասվեց, որ հիշեն այն ուխտը, որն Աստված կապել էր Աբրահամի հետ՝ Ա Մնց 16:15-18, Ծնդ 15:7-21.

Ա. Աբրահամը հավատաց Աստծուն սերմի վերաբերյալ Նրա խոստման առնչությամբ. բայց նրան չհերիքեց հավատքը՝ հավատալու Աստծուն բարի երկրի խոստման առնչությամբ՝ խխ. 6-8:

Բ. Աբրահամի հավատքն ամրապնդելու համար Աստված ստիպված եղավ հաստատելու Աբրահամին տված Իր խոստումը՝ նրա հետ ուխտ կապելով՝ խխ. 9-21.

1. Աբրահամի հետ Աստծու կապած ուխտը խոստման ուխտ էր, և այն կատարվելու էր Աստծու զորության շնորհիվ Նրա շնորհքի մեջ՝ Հվի 1:14, 17:
2. Նոր ուխտն այս ուխտի շարունակությունն է՝ Գղտ 3:17, 4:22-26:

Գ. Աստված Աբրահամի հետ Իր ուխտը կապեց խաչված ու հարուցանված Քրիստոսի միջոցով՝ Ծնդ 15:9, Հռմ 6:5-6, 9.

1. Մորթված երեք տեսակի անասունները խորհրդապատկերում են Քրիստոսին Իր մարդկայնության մեջ, ով խաչվեց մեզ համար, իսկ երկու թռչունները խորհրդապատկերում են Քրիստոսին Իր աստվածայնության մեջ՝ որպես Նրա, ով կենդանի ու հարուցանված է՝ Ծնդ 15:9, Հվի 11:25, Հյտ 1:18:
2. Երինջը խաղաղության ընծայի համար էր, այծը մեղքի զոհի համար էր, իսկ խոյը՝ ողջակեզի՝ Ծնդ 15:9, Ղևտ 3:1, 4:28, 5:6, 1:10:
3. Ըստ նախատիպի՝ տատրակը խորհրդապատկերում է չարչարվող կյանքը, իսկ աղավնու ձագը՝ հավատացող կյանքը, հավատքի կյանքը. սրանք երկրի վրա Տիրոջ կյանքի երկու բնութագրիչներն էին՝ Ծնդ 15:9:
4. Քանի որ երկուսը վկայության թիվ է, երկու կենդանի թռչունները վկայում են, որ Քրիստոսն ապրում է մեր մեջ և մեր փոխարեն՝ խ. 9, Հվի 14:19-20, Գղտ 2:20:

VI. Որպես Քրիստոսին հավատացողներ՝ մենք պետք է ունենանք աղոթքներ, որոնք արտահայտում են Աստծու կամքն ու մեր ցանկությունն առ այն, որ մեր անձնական հոգևոր սահմաններն ընդլայնվեն՝ Ա Մնց 29:10-20, 4:10.

Ա. Տիեզերքում երեք կամք կա՝ աստվածային կամքը, սատանայական կամքը և մարդկային կամքը. Աստված ուզում է, որ մարդու կամքը միանա Իրեն և մարդը մեկ լինի Իր հետ, որպեսզի մարդն արտահայտի և անդրադարձնի Աստծու կամքը՝ այն աղոթքով վերադարձնելով Նրան Նրա հաճության համար՝ Մտթ 6:10, 7:21.

1. Աղոթքի իրական իմաստը բաղկացած է չորս փուլից.
   ա. Աստված մտադիր է Իր կամքի համաձայն ինչ-որ բան անել՝ 6:10:
   բ. Նա Հոգու միջոցով Իր կամքը բացահայտում է մեզ, որպեսզի իմանանք Իր կամքը:

գ. Մենք աղոթքի միջոցով Աստծու կամքը վերադարձնում ենք Իրեն և արձագանքում դրան՝ Հվի 15:7:

դ. Աստված Իր աշխատանքն իրագործում է Իր կամքի համաձայն՝ Հյտ 4:11:

2. Միայն այն աղոթքները հոգևոր արժեք ունեն, որոնք սկիզբ են առել Աստծուց և անդրադարձնում են այն բաները, որոնք Նա է սկսել. մենք պետք է սովորենք այսպիսի աղոթքով աղոթել՝ Եփս 6:18, Ա Հվի 5:14-16ա:

Բ. Գաբեսն աղաղակեց Աստծուն, որպեսզի Նա ընդարձակի իր սահմանը. նրա աղոթքի մեջ բարի երկրի սահմանի ընդլայնումը խորհրդապատկերում է Քրիստոսին ձեռք բերելու և Քրիստոսին վայելելու սահմանի ընդլայնումը, Նրա, ով բարի երկրի իրականությունն է՝ Ա Մնց 4:10, հմմտ Փլպ 3:8-14:

VII. Բ Մնց 20:15-22-ի հիման վրա կարող ենք սովորել մասնակցել հոգևոր պատերազմին՝ Տիրոջը գովաբանելով.

Ա. Բ Մնց 20:15-ում Եհովան Հովսափատ թագավորին ասաց. «Դուք մի՛ վախեցեք և մի՛ զարհուրեք այս մեծ բազմության պատճառով, որովհետև սա ձեր մարտը չէ, այլ Աստծու», իսկ 17ա խոսքում Նա ասաց. «Դո՛ւք չեք պատերազմելու այս մարտում».

1. Ծառայողներից շատերը սկսեցին գովաբանել Եհովային՝ Իսրայելի Աստծուն, չափազանց բարձր ձայնով՝ խ. 19:

2. Երբ նրանք սկսեցին երգելով ցնծալ ու գովաբանել, Եհովան դարաններ դրեց թշնամիների դեմ, և նրանք կոտորվեցին՝ խ. 22:

Բ. Գովաբանությունը Աստծու զավակների կողմից իրականացված բարձրագույն աշխատանքն է՝ Սղմ 119:164, Եբր 13:15.

1. Սրբի հոգևոր կյանքի բարձրագույն արտահայտությունը իր գովաբանելն է Աստծուն՝ Սղմ 146:2, Եբր 13:15, Հյտ 5:9-13, 19:1-6.

ա. Քրիստոնեական կյանքը վեր է խոյանում գովաբանությունների միջոցով՝ Գրծ 16:19-34:

բ. Գովաբանել նշանակում է բարձրանալ ամեն ինչից, որպեսզի դիպչենք Տիրոջը՝ Հյտ 14:1-3, 15:2-4:

2. Հոգևոր հաղթանակը կախված է ոչ թե մարտնչելուց, այլ գովաբանությունից՝ Բ Մնց 20:20-22:

Գ. Եկեղեցական կյանքում և մեր անձնական կյանքում մենք պետք է ավարտունացնող գովք մատուցենք Աստծուն՝ Սղմ 22:22բ, Եբր 2:12բ:

Դ. Քրիստոսի միջոցով, ում մենք փորձառաբար ապրել ու վայելել ենք, մենք պետք է մշտապես գովաբանության զոհ մատուցենք Աստծուն՝ 13:15:

Ե. «Ամբողջ սրտով Քեզ եմ գովաբանելու, ո՛վ Տեր, իմ Աստված. ու հավիտյան փառաբանելու եմ Քո անունը»՝ Սղմ 86:12:

© 2022 Living Stream Ministry